Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍԸ

... Բարձրահասակ էր, հաղթանդամ, լայնալանջ ու ազդեցիկ։ Մի տեսակ «նպատակային» քայլվածք ուներ, որով գալիս-մոտենում էր դիմացինին և կանգնելիս էլ՝ տպավորությունն այնպիսին էր, որ կարծես պատրաստվում էր կատաղի բանավեճ սկսել։ Խոսում էր բարձրաձայն, շեշտակի, հագեցած հրամայողի, կարգադրողի արտահայտված երանգավորումներով, որն անպայման ուղեկցվում էր ձեռքերի տիրական, հաճախ սպառնական շարժումներով։ Առինքնող, բացարձակապես ճաղատ գլուխը և դեղին աչքերի անքթիթ նայվածքը, որը գրեթե մշտապես ուղեկցվում էր խստաշունչ «ակադեմիկոսական» կկոցումներով, հրաշալիորեն գալիս էին ամբողջացնելու ու լրացնելու իրար։ Տարիների համատեղ աշխատանքի ընթացքում ես ոչ մի անգամ չեմ տեսել, որ այդ դեղին աչքերը ժպտային մեղմաբար ու անուշ, կամ նայեին դիմացինին խրախուսող, քաջալերող հայացքով, կամ հոգածու-բարեկամական ինչ-որ երանգ ունենային։ Վստահորեն կարող եմ ասել, չի տեսել ոչ ոք։

Ընդհանրապես ակադեմիկոսը խոսում էր ռուսերեն, որովհետև ռուսերենը «Մեծ Հոկտեմբերի», «Լենինի-Ստալինի» լեզուն է, և մեզ՝ «դեղնակտուցներիս» (իր բառն էր. Ս.Շ.) «մշակում էր» անողոք ու անխնա, եթե մենք այդ հարցում թեկուզ աննշան զանցանքներ էինք թույլ տալիս։ Բոլորս էինք հիշում, թե ինչպիսի նկատողություն ստացավ մեր աշխատակցուհիներից մեկը, երբ հանդգնեց ասել, որ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հայ գրականության ինստիտուտում աշխատակիցները պետք է խոսեն հայերեն։ Ակադեմիկոսն անհապաղ սկսեց իր խրոխտաձայն խոսքը, որը պարզապես անկարելի էր լինում ընդհատել, և դիմացինին մնում էր լռել և, հետևաբար, ստիպված լսել։ Իսկ նրա խոսքը, ես հատկապես կամենում եմ շեշտել, կառուցված էր լինում այնպես, որ կենտրոնում լիներ ինքը, որ երևույթներն ու դեպքերը տեղի ունենային ու պատճառաբանվեին իրենով ու հիմնականում իր միջոցով։

Խոսակցություն բացվեց, օրինակ, Լենինգրադի Տավրիկյան պալատի մասին։ «Ա՜, Տավրիկիա՜ն, – անհապաղ միջամուխ եղավ ակադեմիկոսը, – Տավրիկիան... Գիտե՞ք

այնտեղ Վլադիմիր Իլյիչը մեզ համար զեկուցում կարդաց միջազգային դրության մասին։ Եռանդուն, աշխույժ մարդ էր, շատ շարժուն։ Հետո, երբ իմացավ, որ ես հայ եմ, ինքը մոտեցավ ինձ, և մենք երկար ժամանակ զրույց ունեցանք...»։

Ինստիտուտում բաժանորդագրություն սկսվեց Գրիգորի Օրջոնիկիձեի երկերի երկհատորյակի համար։ «Սպասե՛ք, սպասե՛ք, – սկսեց ակադեմիկոսը, – դա Սերգոն է, այո՞։ Սերգո Օրջոնիկիձեն։ Դե՛ սիրելիներս, նա հիանալի մարդ էր,նրա նման երկրորդը պարզապես չի կարող լինել, – նա քիչ լռեց, – մեր Սերգո՛ն... Երբ մենք ծանոթացանք...»։

Կամ՝ ինստիտուտը գնեց Շահումյանի յուղանկար-դիմանկարը, և մենք այն կախեցինք տնօրենի առանձնասենյակում։ «Օ՛, չէ՛, չէ՛, նկարը շատ քիչ է նման մեր Ստեփանին, – դժգոհ փնթփնթաց ակադեմիկոսը, – մազերն ինչ-որ այն չեն, դեմքը ասես դիմակավորված լինի, հետո աչքե՛րը... ախր նա կապույտ աչքեր ուներ, որոնց առանց հիացմունքի չէր կարելի նայել, և Տերյանն էլ է այդ մասին գրել։ Մի անգամ գիտե՞ք ինչ եղավ...»։

Ամերիկացի հայտնի հայագետ Ալիս Ստոն Բլաքվելի թարգմանությամբ անգլերեն հրատարակված «Հայկական պոեմներ» ժողովածուն հետաքրքրեց ակադեմիկոսին։ «Սա լավ ժողովածու է, գիտե՞ք, – սկսեց նա, – թեև միսիս Բլաքվելը հայերեն այնքան էլ լավ չգիտեր։ 1920, թե 21 թվականին, երբ ես նրան հանդիպեցի Ամերիկայում...»։

Եվ այսպես անվերջ, և այսպես տարիներ շարունակ։

Հիմա, երբ ժամանակների հեռավորությունից ես քննում ու վերլուծում եմ այս ամենը, չեմ կարող երևույթները չկոչել իրենց անուններով. դա ամենաիսկական ինքնագովազդ էր։ Ճիշտ է, լավ մտածված, դիմացինին գրավող ու հետաքրքրող, բայց այնուամենայնիվ ինքնագովազդ էր։ Իսկ այն ժամանակ մենք՝ «դեղնակտուցներս», ինչպիսի՛ մեծ հմայքով և, թող ներվի ասել, չթաքցված նախանձով էինք լսում նրան...

Եվ որպես այս բոլորի ուղղակի շարունակությունն ու զարգացման հաջորդ աստիճան՝ ակադեմիկոսի սկզբունքային, կուսակցական-մարքսիստական

դիրքավորումը «գաղափարախոսության ճակատում», որը որոշակիորեն արտահայտվում էր ամենուրեք, ամեն քայլափոխում և յուրաքանչյուր հարմար առիթով։ Չնայած նրան, որ նա պաշտոնապես համարվում էր Գրականության ինստիտուտի գիտական աշխատակից, հաստատուն հետևողականությամբ իր «գաղափարական» այցելություններն էր կատարում Գիտությունների ակադեմիայի հումանիտար թեքում ունեցող գրեթե բոլոր ինստիտուտներ, Պետական համալսարանի և Մանկավարժական ինստիտուտի համաբնույթ ամբիոններ, այլևայլ թերթերի ու ամսագրերի խմբագրություններ և ամենուրեք տալիս էր իր ղեկավար հրահանգավորումները, սովորեցնում էր, թե ինչ պետք է անել և ինչպես, քննադատում էր, նախազգուշացնում, նախապատրաստում...

- Ցը-նոր-վե՛լ են, պարզապես խելքները թրռ-ցը-րե՛լ են, – այսպիսի խոսքերով մի անգամ մեր սենյակ ներս ընկավ ակադեմիկոսը, – իմացե՞լ եք։ Հայաստանի պետական հրատարակչությունը որոշել է Դանիել Վարուժան հրատարակել։ Նույնիսկ պլանավորել են, ի՛նքս տեսա։ Պարզապես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս են մտածում մարդիկ, կամ առհասարակ մտածո՞ւմ են, թե ոչ։

- Դե հասկացե՛ք վերջապես, – նկատելով մեր անհանգիստ շարժումները, հախուռն վրա տվեց ակադեմիկոսը, – ի՞նչ է երգել Դանիել Վարուժանը. մահ, կոտորածներ, սպանություններ, հրապարակային բռնաբարություն, արյան նախճիրներ, մի կտոր հացի կարոտից տառապող ու սովից մեռնող երեխաներ... Պե՞տք են հիմա դրանք մեզ։ Վարուժանը մահվան ու կոտորածի երգիչ է, այսօր մենք մա՞հը փառաբանենք։ Իսկ որտե՞ղ մնաց մեր պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Մեր պետության ղեկավարը՝ Նիկիտա Խրուշչովը, աշխարհից-աշխարհ ընկած եղբայրական բարեկամության ու խաղաղ գոյակցության կոչեր է անում, և այս պայմաններում մենք Վարուժա՞ն պետք է հրատարակենք։ Օ՜, ոչ, ես այդ չե՛մ հանդուրժի, ես այդ երբե՛ք թույլ չեմ տա։ Այս մի քանի օրս ես նորից կգնամ Պետական հրատարակչություն...

Եվ գնաց։ Եվ հրատարակչական պլանից հանել տվեց Դանիել Վարուժանի երկերի ժողովածուն, հոգեկան ապրումների ծանրագույն պահեր «պարգևելով» կազմողին՝ Սողոմոն Տարոնցուն։

Բաժնում խոսակցություն բացվեց Միքայել Նալբանդյանի մասին։ Երիտասարդ ասպիրանտներից մեկը մտադրվել էր դիսերտացիա գրել՝ ուսումնասիրելով նրա չափածո ստեղծագործությունները, և այս կապակցությամբ անհրաժեշտ դիտվեց իմանալ ակադեմիկոսի կարծիքը։

- Միքայել Նալբանդյանի պոեզիա՞ն։ Ի՞նչ կա որ, կարելի է, – ոչ առանց մեծ ոգևորության համաձայնեց ակադեմիկոսը, – բայց այստեղ անպայման անհրաժեշտ է մարքս-լենինյան մոտեցումը։ Մենք ոչ մի իրավունք չունենք մոռանալ, որ Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը դարձրել էր իր կուսակցական հիմնը և այն օգտագործում է անգամ այսօր, – ակադեմիկոսը խորհրդավոր կերպով լռեց, – ինչպես տեսնում եք գաղափարական փոխըմբռնումն ու փոխկապակցությունը առավել քան որոշակի է։ Իսկ չէ՞ որ մենք լավ գիտենք, թե իրենից ինչ է ներկայացնում Դաշնակցություն կուսակցությունը...

Ավա՜ղ, այո։ Հիսնական թվականներին մենք առավել քան լավ գիտեինք, թե ինչ բան է «Դաշնակցությունը»՝ «իմպերիալիզմի ծախու լաքեյ», «միջազգային ռեակցիայի տիրահաճ սպասարկու», և ովքեր են այդ կուսակցության անդամները՝ «հայկական ֆաշիստներ», «ազգային բոլոր արժեքները թուրքերին վաճառած մատնիչներ» և այլն։ Եվ մեր այդ «քաջագիտակությունը», ցավոք, դեռ երկար էր շարունակվելու, մի քանի սերունդներ էին աճելու՝ «դաստիարակված» այդ նույն ոգով ու տրամաբանությամբ... (Փակագծում ավելացնեմ, որ Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը հռչակավոր «Մեր հայրենքն» է, որն այսօր մեր երկրի պետական հիմն է)։

Երիտասարդ, խոստումնալից քննադատ Հրանտ Մաթևոսյանը 1962 թվականին հրատարակեց իր գրական-քննադատական հոդվածների «Գրական ուղիներում»

խորագիրը կրող ժողովածուն, որտեղ վերլուծելով Եղիշե Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմը, բացահայտել էր այն դրական, ազգը համախմբող դերը, որ 20-ական թվականների սկզբներին կատարել էին հայկական ժողովրդական-ազատագրական շարժումները և այդ հենքի վրա բնութագրել էր Շավարշին, որպես այդ շարժման պարագլուխներից և, հետևաբար, այդ գաղափարը մարմնացնողներից մեկին։ Ակադեմիկոսի վերաբերմունք-անդրադարձը հաջորդեց գրեթե անմիջապես.

- Թամրազյանի զարգացրած տեսակետը գաղափարական սայթաքո՛ւմ է, – փնթփնթում ու դժգոհում էր նա, - և այն էլ մեր մտայնությանը կատարելապես հակասող գաղափարական սայթաքում։ Բոլոր այդ տիպի շարժումները, որոնք եղել են Հայաստանում, ամենաիսկական խմբապետական շարժումներ են եղել և այդ իսկ պատճառով էլ նրանք ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ համաժողովրդական հարգանքի և պաշտպանության չեն արժանացել։ Հրանտ Թամրազյանը չի հասկացել տարրական այն ճշմարտությունը և խմբապետ Շավարշին, այդ թալանչուն, այդ ատամանին վերածել է ազգային հերոսի։ Ինչո՞ւ Ռուսաստանում ոչ ոք ոչինչ չի գրում Նեստոր Մախնոյի մասին և այն էլ դրական։ Որովհետև նա բանդիտ էր, ամենաիսկական ատաման, այսինքն՝ իր ժողովրդի, իր հայրենիքի գիտակցված թշնամին։ Նույնն է նաև մեզ մոտ՝ Հայաստանում, և նույնը՝ խմբապետ Շավարշի առումով։ Եթե հետևելու լինենք Թամրազյանի տրամաբանությանը, մեր ժողովրդին պատիվ բերող ազգային հերոսների, ասենք՝ Շահումյանի, Սպանդարյանի, Ղուկաս Ղուկասյանի, Մյասնիկյանի և մյուսների շարքում պետք է տեղ տանք նաև Համազասպի՞ն, Գևորգ Չաուշի՞ն, Քեռո՞ւն, Աղբյուր Սերոբի՞ն և սրանց նմանների՞ն։ Պետք է տեղ տանք նաև Անդրանիկի՞ն, որն ինչպես հայտնի է, ուղղափառ դաշնակցական էր։ Էլ որտե՞ղ մնաց մեր դասակարգային գիտակցությունը։ Դե մի՞թե ես՝ ակադեմիկոս, մինչհեղափոխական ժամանակվանից կուսակցական ստաժ ունեցող կոմունիստս (ի դեպ, սա ակադեմիկոսի սիրած արտահայտությունն էր. Ս.Շ.) կարող եմ նման վրիպումը հանդուրժել։ Ես կգրե՜մ, անպայմա՜ն կգրեմ այս մասին որտեղ որ պետք է։

Եվ գրեց։ Հրանտ Թամրազյանի «Գրական ուղիներում» ժողովածուն գրախանութ չհասած՝ հանվեց վաճառքից, մի բան, որը զգալի ապրումների ու մտահոգությունների պատճառ հանդիսացավ նրա հեղինակի համար։

- Ձեր սերունդը, դեղնակտուցներ, – մի անգամ դիմելով մեզ ի միջի այլոց նկատեց ակադեմիկոսը, – ամենաերջանիկն է ու ամենաբախտավորը, համեմատած նախորդի հետ, որովհետև հայագիտական դիսցիպլինները դուք ուսանում եք այստեղ՝ ձեր հայրենի երկրում, Մայր հայրենիքում։ Իսկ առաջ, հայազգի պատանիներն ու երիտասարդները հայագիտություն սովորելու և հայագիտության մեջ խորանալու համար մեկնում էին Եվրոպա՝ Փարիզ կամ Լոնդոն, Վենետիկ, Վիեննա... Այսպես են ստացել իրենց հայագիտական կրթությունը Աճառյանը, Աբեղյանը, Մանանդյանը, Թադևոս Ավդալբեկյանը և շատ ուրիշները։ Իսկ դուք ի՞նչ եք կարծում, արտասահմանյան հայագետ-գիտնականները, այսինքն՝ գերմանացի, ֆրանսիացի կամ իտալացի պրոֆեսորները, հայագիտական դիսցիպլինները մեր երիտասարդներին ավանդում էին հենց այնպե՞ս, առանց մեզ համար խորթ ու վնասակար գաղափարների ներարկմա՞ն, – ակադեմիկոսը բազմանշանակալից ծիծաղեց, – չէ՞ որ այդպիսի բան չի կարող լինել։ Պարզ չէ՞, որ նրանք մեր անփորձ երիտասարդների ուղեղներում անպայման կներարկեին, օրինակ, նացիոնալիստական այն գաղափարը, որ հայ ժողովուրդը, քանի որ աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկն է, ուրեմն ավելի շատ է արժանի ուշադրության, կամ քանի որ հայերը դեռ 5-րդ դարում պատմագրություն ունեին, ինչ չունեին եվրոպական ու ասիական երկրների շատ ազգեր, ուրեմն հայերն ավելի խելացի են, քան մյուսները, – ակադեմիկոսը խորամիտ տեսքով բարձրացրեց ցուցամատը, – տեսնո՞ւմ եք։ Այդ իսկ պատճառով էլ Եվրոպայում իրենց կրթությունն ստացած մեր բոլոր հայազգի գիտնականների աշխատություններում կարմիր թելի նման անցնում է մերկապարանոց նացիոնալիզմն ու ազգային նիհիլիզմը իր բոլոր արտահայտություններով ու դրսևորումներով։ Իսկ դուք, փա՛ռք աստծո, ազատված եք այդ կարգի վրիպումներ թույլ տալու հնարավորությունից։ Այդ իսկ պատճառով էլ միայն քննադատաբար պետք է մոտենալ Եվրոպայում ուսում ստացած հայ մտավորականության այլևայլ աշխատություններին, վերոհիշյալ բնույթի

գաղափարական սայթաքումներից խուսափելու համար։ Այս է մեզ համար հարցերի հարցը։

Իհարկե, հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ կային մտավորականներ թե՛ մեր ինստիտուտում, և թե՛ մանավանդ ինստիտուտից դուրս, որոնք երբեմն հակադրվում էին ակադեմիկոսին կամ վիճարկում էին նրա զարգացրած տեսակետները։ Բայց այսպիսի դեպքերում նրա դեղին աչքերը կրակ ու բոց ժայթքելով մեխվում-բևեռվում էին խոսակցի վրա, ձայնը անբնականորեն բարձրանում էր ու մի տեսակ երկաթե կարծրություն ստանում, ձեռքերի տիրական շարժումները դառնում էին ավելի ու ավելի ահազդու և այս սարսափելի հենքի վրա ժայթքում էր բազում-բազմաթիվ թվերից, անուններից, պատմական ու գրական դեպքերից, այլևայլ ցիտատներից ու մեջբերումներից կազմված նախադասություն, կրակոցների այնպիսի մի լայնահորդ հեղեղ, որ խոսակիցը գերադասում էր ձեռքը թափ տալ և ընկճված լռել։

Եվ որպես լրացում ակադեմիկոսի գրական այս դիմանկարին, նրա զարմանալի, տրամաբանական ոչ մի չափ ու սահման չճանաչող գրքասիրությունը, կամ, եթե ինձ թույլ կտրվի բառ ստեղծել՝ նրա «գրքագնողությունը»։ Նա գնում էր ամեն բովանդակության ու բնույթի գրքեր, դրանք ստանում էր մեր երկրի ու արտասահմանի տարբեր ծայրերից, գնում էր նույն գրքի երկրորդ, հաճախ էլ մի քանի վերահրատարակությունները և այս բոլորը, ըստ հեղինակների ազգանունների այբբենական հաջորդականության, նախանձելի խնամքով զետեղում էր իր բազմաթիվ հսկայածավալ գրապահարաններում։ Այդ վիթխարի գրապահարաններում, որոնք ի դեպ, գրեթե նույնությամբ պահպանվել են առ այսօր, կողք-կողքի հանգրվանում են Հակոբ Պարոնյանի «Երկերի ժողովածուի» բազմահատորյակը, Պրժևալսկու «Մոնղոլիան և տանգութների երկիրը» աշխատությունը, «Պակիստանցիների պուշտու լեզուն» ժողովածուն, «Պիրոգով Նիկոլայ – ռուս նշանավոր խիրուրգը», Պերճ Պռոշյանի «Երկերի ժողովածուի» եռահատորը, «Պոլինևրիտ. բուժումը և թերապիան», Պոլլիտ Հարրի «Մեծ Բրիտանիայի կուսակցական ականավոր գործիչը» և այլն... Բոլոր գրքերն անխտիր ակադեմիկոսը կարդում էր։ Համենայն դեպս պահարաններում զետեղված այդ գրքերի անվիճելիորեն գերակռիշ մասի վրա կա ինքնահոսի կապույտ թանաքով արված նրա

ընդգծումները։ Կարդացված բոլոր գրքերի վերաբերյալ նրա կարծիքը մշտապես նույն մի քանի բառն էր. «Սա շատ հետաքրքիր է»։

Այսպիսին էր համառոտակի ակադեմիկոսը՝ մարդկային և հասարակական-գիտական ամբողջության մեջ, հենց այդպիսին էլ նրան գիտեինք բոլորս։ Եվ ենթադրել, պատկերացնել անգամ չէի կարող, որ ինձ՝ ինստիտուտի ընդամենը մեկ տարվա ասպիրանտիս, այսինքն՝ «դեղնակտուցիս» այս հասկացողութան ամենալայն ու բովանդակալից իմաստով, պիտի վիճակվեր հակադրվել ու ընդդիմանալ նրան...

Իրադարձությունները ծայր առան 1956 թվականի սկզբներից, երբ Գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը իր հերթական նիստերից մեկում, որպես դիսերտացիոն աշխատանք, ինձ համար հաստատեց «Ղևոնդ Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը» թեման և գիտական ղեկավար նշանակեց այն ժամանակ բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ինճիկյանին։ Իմ կյանքում նշանակալից ու կարևոր մի իրադարձություն, որը, կարծում եմ, համապատասխան մեկնաբանությունների կարիք չունի։ Իսկ որպեսզի իմ բարեմիտ ընթերցողին մինչև վերջ հասկանալի լինի հոդվածիս հետագա շարադրանքը, պետք է մի քանի խոսքով բնութագրեմ ղեկավարիս։

Լինելով հանրապետության աչքի ընկնող գրականագետներից մեկը, մեր դասականներից՝ Նալբանդյանի, Իսահակյանի, հետագայում Թումանյանի կյանքի ու գործի խորանիստ ուսումնասիրողը, լինելով հմուտ բնագրագետ և այդ բնույթի մեկից ավելի աշխատությունների հեղինակ, Արամ Ինճիկյանը, սակայն, իր ոչ հեռավոր անցյալում թույլ էր տվել երկու ծանրագույն հանցանքներ, որոնք շատ հարցերում ճակատագրական դեր էին խաղացել նրա կյանքում և, ի դեպ, խաղացին ընդհուպ մինչև վերջ։ Նախ, նա Սովետական Միության կոմունիստական կուսակցության՝ ՍՄԿԿ անդամ չէր, և ինչպես պատմում-շշնջում էին «բարի» լեզուները, երբ նրան առաջարկել էին անդամագրվել, նա քաղաքավարի հրաժարվել էր այդ պատվից։ Իսկ լինել Խորհրդային միության քաղաքացի, ապրել այդ երկրի տարածքում և չլինել Կոմունիստական կուսակցության անդամ, նշանակում էր, գոնե այն ժամանակ, որի

մասին խոսվում է, լինել «երկրորդ կարգի» մարդ, այստեղից բխող բոլոր նվաստացուցիչ հետևանքներով։ Եվ երկրորդ, թերևս ավելի կարևորը. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, լինելով խորհրդային գործող բանակի սպա, Արամ Ինճիկյանը գերի էր ընկել գերմանացիներին, այդպիսով ոչ միայն «արատավորելով իրեն ծնող ու սնող ժողովրդին», այլև խախտելով ռազմական կանոնադրության այն կետը, որտեղ սևով սպիտակի վրա նշված էր, որ նման դեպքերում խորհրդային զինվորը, առավել ևս սպան, պետք է վերջին գնդակը պահեր իր համար... Նման սկզբունքային-կուսակցական քաղաքականության հետևանքով այդպիսի «արատավոր» անցյալ ունեցող մարդիկ անգամ պաշտոնապես որակվում էին «անբարեհույսներ», նրանցից աշխատում էին հեռու մնալ, դիմել հնարավոր ամեն միջոցի աշխատանքի չընդունելու, իսկ եթե այնուամենայնիվ «անբարեհույսը» աշխատանքի էր անցել, նրանից րոպե առաջ ազատվելու համար։ Նրանցից շատերը զրկված էին նույնիսկ հանրապետության խոշոր քաղաքներում ապրելու իրավունքից։ Իր հերթին, որպես նման քաղաքականության բնականոն հետևանք, այդ մարդիկ, նաև Արամ Ինճիկյանը, վերին աստիճանի զգուշավոր էին, մի տեսակ վախվորած, կարծիք հայտնելիս կամ որևէ տեսակետ զարգացնելիս անսահմանորեն շրջահայաց... այսպիսին էր, ահա, իմ ղեկավարը։

Այսպես, ուրեմն, իմ դիսերտացիոն թեմայի հաստատումից և ինձ պաշտոնապես ղեկավար նշանակելուց բառացիորեն մի քանի օր անց, մեզ տեղեկացրեցին, որ ակադեմիկոսը կամք էր հայտնել հանդիպել երկուսիս և զրուցել «առաջնակարգ կարևորություն ունեցող մի քանի հարցերի մասին»։

... Արամ Ինճիկյանին նա «շարքից հանեց» մեր հանդիպման հենց ամենասկզբում. «Բայց դուք ո՞վ եք, ո՞վ, – դեղին աչքերի շեշտակի փայլով շանթելով ղեկավարիս, վրա տվեց ակադեմիկոսը, – դուք անկուսակցակա՛ն եք, իսկ իմ՝ միայն կուսակցական ստաժը, ձեր տարիքից ավելի է։ Հետևաբար ինստիտուտի գաղափարական աշխատանքների անաղարտության համար ե՛ս եմ պատասխանատու և ոչ թե դուք։ Իսկ եթե անկեղծ լինենք, ես չե՛մ էլ ցանկանում որևէ խոսակցություն սկսել ձեզ պես մեկի հետ, որը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ռազմաճակատում արատավորել է մեր փառապանծ խորհրդային բանակի անունը»։

Ինճիկյանը վախեցած լռեց՝ գաղտագողի ինձ նայելով մի տեսակ շփոթված-մեղավոր հայացքով, բայց դրա փոխարեն իրադարձությունը վերջնականապես հստակվեց ինձ համար՝ ընդունում եմ հարվածն ինձ վրա։ Դե մի՞թե պիտի հանդուրժեմ, որ վիրավորեն իմ ղեկավարին, ազնվագույն ու բարեհոգի մարդուն, հիանալի մասնագետին ու անզուգական ավագ ընկերոջը։ Այսպես թե այնպես՝ չէ՞ որ ես էլ էի կուսակցական, ճիշտ է, ընդամենը մեկ ամսվա ստաժով, ես էլ էի դաստիարակված «գաղափարական անզիջումության», «կուսակցական բարձր սկզբունքայնության» ոճով ու ոգով։

Ակադեմիկոսը, թեքվելով Ինճիկյանից, ցուցադրաբար դարձավ ինձ՝ և հանդիսավորաբար սկսեց իր խոսքը։ Իսկ որովհետև ես ջանասեր ուսանողի պատրաստակամությամբ շատ ուշադիր լսում էի նրա ասածները, չթաքցված գոհունակությամբ ծավալվեց ու ծավալվեց տեսական-գրականագիտական ու հայագիտական մի ամբողջ խումբ հարցերի ոլորտում, և շուտով մեր խոսակցությունը վերածվեց օրինակելի դասախոսության։

Արձանագրելով այն փաստը, որ գրականությունն իր բոլոր դրսևորումներով ունի հստակ արտահայտված դասակարգային բնույթ, որն էլ հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի անկյունաքարային հիմնադրույթներից մեկը և ուղեցույց անմար աստղ է բոլորի համար, ակադեմիկոսը ուղղակի դարձավ ինձ.

- Ձեզ համար, երիտասարդ, հայ նոր գրականության բաժինը դիսերտացիոն թեմա է հաստատել Ղևոնդ Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը։ Իհարկե, Ալիշանի գործն առհասարակ արժանի է հանգամանալից ուշադրության։ Նա նշանավոր գիտնական էր, շուրջ քառասուն հատոր աշխատությունների հեղինակ, ճանաչված բանաստեղծ և անզուգական թարգմանիչ, մանավանդ որ եվրոպական ու ասիական բազմաթիվ լեզուներ գիտեր...

- Նա Մոսկվայի հնէաբանական և Պետերբուրգի հնախոսական ընկերությունների պատվավոր անդամ էր, նամակագրություն ուներ ռուս նշանավոր քննադատ Վլադիմիր Ստասովի հետ, – խոսակցիս ոչ այնքան քաղաքավարի ընդհատեցի

ես, հուսալով, որ ընդգծելով Ալիշանի կապերը ռուսական իրականության հետ, կկարողանամ որոշ դրական բեկում մտցնել նրա խոսքի մեջ հօգուտ իմ հեղինակի։

- Այո՛, այո՛ այդ բոլորն իհարկե այդպես է, – ակադեմիկոսը շունչ առավ, – իսկ եթե հարցին մոտենանք մարքս-լենինյան գաղափարախոսության տեսանկյունի՞ց։ Չէ՞ որ հանրահայտ է, որ Ղևոնդ Ալիշանը կաթոլիկ էր, հանդիսանում էր հռոմեական-կաթոլիկ ամենահետամնաց ու պահպանողական գաղափարախոսության ջատագովն ու ներկայացուցիչը։ Իսկ դուք կոմունիստ եք, մեր՝ մարքս-լենինյան ամենաառաջավոր ուսմունքի ներկայացուցիչը, – խոսակիցս հաղթական հայացքով նայեց ինձ, – դրանք չափազանց տարբեր և իրար նկատմամբ հակադիր դրսևորումներ են, – նա տարածեց ձեռքերը՝ ցույց տալով «հակադիր դիրքավորումները», - և դուք ոչ մի ակնթարթ իրավունք չունեք մոռանալ այս հանգամանքը, եթե չեք կամենում, որ ձեր աշխատանքը հետագայում որակվի որպես գաղափարական տհասություն, այստեղից բխող բոլոր անցանկալի հետևանքներով։

Խոստովանում եմ, պատասխանում էի ու բավականին համարձակ, եթե չասեմ հանդուգն, խոսակցիս նման ձայնս բարձրացնելով ու նրա նման խոսքս ուղեկցելով ձեռքերի ազատ շարժումներով։ Ընդհանուր եզրակացությունը, որին երկարատև վեճ ու աղմուկից հետո ի վերջո հանգեցինք, հետևյալն էր. ես, իհարկե, շարունակելու եմ աշխատանքներս Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունն ուսումնասիրելու առումով, բայց անպայման նկատի ունենալով ակադեմիկոսի ղեկավար դրույթները։

- Իր աշխատանքի մեջ Շտիկյանը ցիտատներ կբերի ձեր աշխատություններից՝ Ալիշանի գաղափարական մակարդակը իր մենագրության մեջ բարձր պահելու համար, – խայթեց Արամ Ինճիկյանը։

- Դուք կարդացե՞լ եք մեր կոմունիստական շարժման ծրագրային փաստաթուղթը՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», – կարճատև դադարից հետո խոսակցությունը վերսկսեց ակադեմիկոսը, – նշանակում է վա՛տ եք կարդացել, – նկատելով իմ գլխի դրական շարժումը, խոսքը շարունակեց նա, - «Մանիֆեստում» սևով սպիտակի վրա գրված է. «Պրոլետարիատը հայրենիք չունի»։ Ահա՛ մեր ուսմունքի

ամենակարևոր հիմնայուներից մեկը և մեզ՝ գաղափարախոսության հարցերով զբաղվողներիս համար, առաջնայինը։ Իսկ ասացեք խնդրեմ, իր բազմաթիվ բանաստեղծություններում ու պոեմներում, թե՛ գրաբար, և թե՛ աշխարհաբար լեզուներով, ի՞նչ է երգում ու փառաբանում Ալիշանը, – ակադեմիկոսի ձայնը հեգնական երանգ ստացավ, - «Քեզ պի՛նդ եմ սիրում, Հայո՛ց աշխարհիկ», «Հազա՛ր անգամ կմեռնեմ քեզ համար, Հայաստան աշխարհ», «Անկեղծ հայրենասերին անմահություն է ճակատագրված», – ահա թե ինչ է երգում ու փառաբանում Ալիշանը, – ակադեմիկոսը հաղթականորեն նայեց մեզ, – Սա չէ՞ որ ամենաիսկական նացիոնալիզմ է։ Այո՛, այո՛ հենց այն ամենատիպիկ, ամենավտանգավոր նացիոնալիզմը, որի դեմ պետք է միայն անզիջում ու սկզբունքային պայքար ծավալել։ Սպասե՛ք, սպասե՛ք, սա դեռ բոլորը չէ։ Ալիշանը մի գրաբար բանաստեղծություն ունի, որտեղ հայտարարում է, թե իր հայրենի այգու մեկ թառամած տերևն անգամ իր համար գերադասելի է, քան ամբողջ աշխարհի բոլոր այգիները միասին վերցրած։ Տեսնում եք, չէ՞։ Սա, սիրելիներս, արդեն շովինիզմ է և ամենացածրագույն որակի շովինիզմ,- ակադեմիկոսը կրկին հաղթական նայեց մեզ, ապա դարձավ ինձ, – հիմա ես ձեզ հարց եմ տալիս. դուք ինչպե՞ս պիտի կարողանաք համատեղել այս երկու և իրար նկատմամբ կատարելապես հակադիր տեսակետները։ Կամ գուցե ձեր անկուսակցական ղեկավարի հետ որոշել եք, – ակադեմիկոսի ձայնը կրկին հեգնական երանգ ստացավ, – մարքսիզմի ամենահաղթ ու ճշմարտացի ուսմո՞ւնքն էլ վերաձևել ըստ Ղևոնդ Ալիշանի ու նրա մտայնության։

Այս անգամ ընդհանուր համաձայնության չեկանք։ Ավելին. երկուսս էլ ինչքան հնարավոր էր բարձրացրեցինք մեր ձայները, մեկից ավելի անգամներ գործածեցինք կծու արտահայտություններ ու սուր դարձվածքներ, ավելի ու ավելի սպառնալից դարձան երկուսիս ձեռքերի շարժումները, անհանգստացած Արամ Ինճիկյանը մերթ համոզելով, մերթ հորդորելով աշխատում էր խաղաղություն ապահովել...

- Ես չեմ հասկանում, թե որտեղի՞ց է դեղնակտուցների մոտ այս սովորությունը, – ինքն իրենից ելած՝ զոռաց ակադեմիկոսը, – անպայմա՛ն պատասխանել և անպայմա՛ն հիմարություններ ասել։

- Ես հիմարություններ չե՛մ ասել, ես միայն լսել եմ հիմարություններ։

- Ինչպե՞ս եք համարձակվում։ Ես հին բոլշևիկ եմ, իմ կուսակցական ստաժը...

- Դուք հին բոլշևիկ չեք, դուք հնացա՛ծ բոլշևիկ եք...

...«Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիան» խորագիրը կրող իմ գրքույկը լույս աշխարհ եկավ Երևանում 1959 թվականին և, ի դեպ, առ այսօր էլ մնում է միակ աշխատությունը այդ թեմայով։ Եվ եթե բարեմիտ ընթերցողը ժամանակ գտնի այն կարդալու, ապա պիտի խնդրեմ, որ շատ էլ չզարմանա, եթե հանդիպի, օրինակ, այսպիսի արտահայտությունների. «Մխիթարյան կաթոլիկ միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը, հասկանալի է, նույնպես կաթոլիկ էր», կամ «Լինելով ջերմ հայրենասեր, իր ժողովրդին խորապես նվիրված ու նրա հայրենասիրական ոգորումների ամենաուժեղ արտահայտիչը, Ալիշանը, սակայն, կաթոլիկ էր», կամ ահա՝ «Ալիշանի ստեղծագործության գերակշռող մասը կրոնական բնույթ ունի»։ Այսպիսի զարմանահրաշ մտքեր կարելի է մի քանիսն էլ բերել, բայց նախ՝ բարեբախտաբար շատ չեն, քանզի դրանց մի մասը գրքույկս հրատարակելու ժամանակ հանեց խմբագիրը՝ Արամ Ինճիկյանը, և ապա, որ կարևոր է, վերևում ասվածից հետո, կարծում եմ, արդեն հասկանալի է, թե «հանցանքիս» ակունքը որտեղից է գալիս...

Երեսուն-երեսունհինգ տարիներ անցան այդ ժամանակներից՝ հասարակական-քաղաքական կյանքում մեծամեծ հեղաբեկումների, գաղափարախոսության բնագավառում բազմաթիվ հաստատուն ու մշտական թվացող տեսակետների հիմնիվեր վերանայման տարիներ։ 1980-ական թվականներին ակադեմիկոսը հիվանդացավ, և ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Էդուարդ Ջրբաշյանի հետ գնացինք նրան այցելելու։ Խոսեցինք գրականության հետ առնչվող այլևայլ հարցերի, ինստիտուտում կատարված ու կատարվելիք աշխատանքների մասին։ Ջրբաշյանը ոչ առանց ներքին ոգևորության տեղեկացրեց, որ արդեն պլանավորված է Ղևոնդ Ալիշանի երկերի հինգհատորյակի հրատարակությունը, որի առաջին հատորի վրա արդեն սկսել են նախնական աշխատանքներ տարվել։

- Այո՛, իհարկե, լավ մտահղացում է, – համաձայնվեց ակադեմիկոսը, – մանավանդ որ մեզ մոտ՝ Հայաստանում, վերջին վաթսուն-յոթանասուն տարիների ընթացքում Ղևոնդ Ալիշան ոչ մի անգամ չի հրատարակվել։ Բայց գիտե՞ք ինչ, մենք չպիտի մոռանանք մի կարևոր հանգամանք. Ղևոնդ Ալիշանը կաթոլիկ էր, իսկ մեր երկիրը կոմունիստական է...

Հայրենի եզեր, 1991, № 8, օգոստոս, էջ 16

Ռուսերեն թարգմանաբար՝ “Литературная Армения”,

1992, № 1, հունվար, էջ 92